ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԱՆԱ ՀՐԱՉՅԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամսոն Աշոտի Դավոյան
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 22 - ին, ժ. 13:30 – ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թվականի մայիսի 21-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Զարգացման ներկա փուլում երկարաժամկետ, կայուն, որակյալ տնտեսական աճի համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից է: Տնտեսական աճի ֆինանսավորման հիմնահարցը այսօր արդիական է բոլոր տնտեսություններում: Ներդրումային գործունեության արդյունավետ կառավարումը կայուն տնտեսական աճ և զարգացում ապահովող ամենահուսալի ճանապարհն է: Խնդիրն առավել արդիական է հատկապես զարգացող տնտեսություններում, որտեղ «աճի նոր աղբյուրների» բացահայտումը աճի կայունության և զարգացման ապահովման հիմնական նախապայմանն է:

Ներդրումային արդյունավետ քաղաքականության արդյունքը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումն ու տնտեսական որակյալ աճն է, և որպես վերջինիս արդյունք նաև բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Տվյալ տեսանկյունից, ներդրումների ներգրավման գործընթացի արդյունավետ կառավարման խնդիրը պետք է դրվի մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի որակի առկայության և վերջիններիս հետևողական զարգացման հիմքերի վրա: Այսինքն, ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականության իրականացումը ենթադրում է սիներգետիկական կառուցվածքով օժտված ցիկլի ձևավորում, որը հիմնված կլինի կառուցվածքային կատարելագործման, արդյունավետության և որակի դերի բարձրացման հիմնադրույթների վրա:

21-րդ դարի երկրորդ տասնամյակը ամփոփող Հայաստանի տնտեսությունում տարիներ շարունակ արձանագրվող տնտեսական աճի արդյունքում չնայած տնտեսական զարգացման մոդելը որակապես էականորեն ձևափոխվել և կատարելագործվել է, սակայն տնտեսության կառուցվածքային կատարելագործման հիմնախնդիրը շարունակում է սրված մնալ: Տնտեսության կայուն զարգացման տեսանկյունից վերարտադրության գործընթացի կայունությունը կախված է ոչ միայն կայուն դինամիկ տնտեսական աճի ապահովումից, այլ նաև այդ աճի որակից, ինչն էլ իր հերթին, ի թիվս այլ գործոնների, կախված է ներդրումային գործունեության արդյունավետությունից և մակրոտնտեսական կառավարման ճկուն մեխանիզմների կիրառումից: Հետազոտությունում դիտարկված հիմնահարցերի կարևորությամբ էլ պայմանավորված են ատենախոսության ***հրատապությունն ու արդիականությունը***:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ տնտեսական զարգացման դինամիկայի և որակի հետազոտմամբ առանձնացնել տնտեսության իրական հատվածում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման ուղղություններ, որոնք միաժամանակ նպաստում են որակյալ տնտեսական աճին և մակրոտնտեսական հավասարակշռության ապահովմանը: Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

❖ Հետազոտել ՀՀ տնտեսական զարգացման դինամիկան, տնտեսական աճի որակն ու կառուցվածը, առանձնացնել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող մակրոտնտեսական որոշ գործոններ,

❖ բացահայտել ներդրումների կառուցվածքային կատարելագործման միտումները, ինչպես նաև ներդրումային գործունեության իրականացման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածում,

❖ իրականացնել խնայողությունները ներդրումների փոխարկելու մակրոտնտեսական պայմանների գործոնային վերլուծություն՝ ընդգծելով եկամուտների որոշիչ դերը և կառուցվածքային առանձնահատկությունները,

❖ Տնտեսագիտական և մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ առանձնացնել ՀՀ տնտեսության իրական հատվածի այն ոլորտները, որոնք կայուն, որակյալ տնտեսական աճի և մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման տեսանկյունից ներդրումների ներգրավման արդյունավետ ուղիներ են,

❖ կատարել ՀՆԱ-ում կապիտալի կուտակման և համախառն պահանջարկի բաղադրիչների՝ սպառման և արտահանման, ռեգրեսիոն վերլուծություն, որի հիման վրա գնահատել ՀՀ տնտեսության իրական հատվածի ներդրումային զարգացման հնարավորությունները,

❖ ներկայացնել բացահայտված հիմնախնդիրների հաղթահարման ուղիներ՝ հաշվի առնելով ազգային տնտեսության զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսությունում հետազոտության օբյեկտն է ՀՀ տնտեսության իրական հատվածը, իսկ առարկան՝ տնտեսության իրական հատվածում ներդրումային գործունեության հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը. Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից կատարված հետազոտությունները, հրապարակումները, գիտատեսական և վերլուծական ուսումնասիրությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են կառավարման խնդիրների, դասական տնտեսագիտության, համեմատական, մաթեմատիկական, էկոնոմետրիկ, ինչպես նաև վիճակագրական վերլուծության մեթոդները:

Աշխատանքի համար տեղեկատվության հիմնական աղբյուր են հանդիսացել ՀՀ վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումներն ու տեղեկագրերը, ՀՀ ԿԲ վիճակագրական հետազոտությունները, Համաշխարհային բանկի և Եվրաստատ ծառայության տվյալները, համաշխարհային կառույցների կողմից հրապարակված հաշվետվությունները և այլ փաստաթղթեր, ինչպես նաև տարբեր գիտավերլուծաբանների կողմից կատարված հետազոտությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական ու կիրառական նշանակություն, որոնցից որպես գիտական նորույթ հատկապես կարևորվում են.

1. Հստակեցվել է ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության իրականացման քանակական և որակական զարգացման անհամապատասխանությունը, տնտեսության կառուցվածքային կատարելագործման համատեքստում բացահայտվել

են որակյալ տնտեսական աճին և մակրոտնտեսական հավասարակշռությանը նպաստող սոցիալ-տնտեսական զարգացման գործոնները:

2. Գնահատվել են տնտեսության իրական հատվածի ոլորտային առաձգականությունները՝ բացահայտելով տնտեսական աճի նկատմամբ զգայուն, ինտենսիվ տնտեսական աճ ապահովող ուղղությունները:

3. Հիմնավորվել է տնտեսության իրական հատվածում ներգրավված ներդրումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ գնահատելով տնտեսական աճի նկատմամբ զգայուն, արտահանելի ոլորտներում որակյալ տնտեսական աճ և մակրոտնտեսական հավասարակշռություն ապահովող ներդրումների տեղաբաշխման ուղղությունները:

4. Վերլուծելով խնայողությունները ներդրումների փոխարկելու մակրոտնտեսական նախադրյալները, ինչպես նաև ակտիվ և պասիվ խնայողությունների իրականացման շարժառիթները՝ հստակեցվել են եկամուտների մակարդակի բարձրացման գործոնները՝ որպես ՀՆԱ-ում կապիտալի կուտակման տեսակարար կշռի ավելացման աղբյուր:

Աշխատանքի գործնական նշանակությունը և օգտագործումը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության իրավահաջորդը համարվող ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Զարգացման հայկական գործակալության կողմից տնտեսական զարգացման գերակայությունների նոր առաջնահերթությունների սահմանման և ՀՀ ներդրումային քաղաքականության կատարելագործման շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթներ զեկուցվել և քննարկվել են «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից խնդիրները» խորագրով հանրապետական գիտաժողովում, ԼՂՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված գիտական կոնֆերանսում, ինչպես նաև ԵՊՀ ՏԳՖ ֆինանսահաշվային ամբիոնի գիտական նիստերում: Հեղինակի կողմից հրապարակվել է յոթ գիտական հոդված:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը պարունակում է 18 /տասնութ/ աղյուսակ, 7 /յոթ/ գծապատկեր, ընդհանուր ծավալը՝ 144 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ *«Ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի և մակրոտնտեսական հավասարակշռության վրա»* գլխում հեղինակի կողմից

ներկայացվել են ներդրումների դերն ու կարևորությունը, վերլուծվել են վերարտադրության գործընթացի կայունության ապահովման մակրոտնտեսական պայմանները և ներդրումների ներգրավման առանձնահատկությունները, ինչպես նաև որակյալ տնտեսական աճին և մակրոտնտեսական հավասարակշռությանը նպաստող սոցիալ-տնտեսական զարգացման գործոնները:

Տնտեսական կյանքի սոցիալականացումը որակապես նոր հատկություններ է հաղորդել ներդրումներին: Տնտեսության արդիականացմանը նպաստող, որակյալ աճ և զարգացում, ինչպես նաև վերարտադրության կայունություն և մակրոտնտեսական հավասարակշռություն ապահովող ներդրումների ներգրավումը ներդրումային գործընթացի պետական կարգավորման կարևորագույն հիմնախնդիրն է դարձել: Տնտեսական աճը բնույթով երկարաժամկետ գործընթաց լինելով հանդերձ, առանձնանում է նաև միջնաժամկետ և կարճաժամկետ դրսևորումներով, այսինքն՝ քանակական աճի ապահովմամբ: Սակայն վերջիններս պետք է սիներգետիկական մեկ ամբողջական գործընթացի տրամաբանական շարունակություն կազմեն, և աստիճանական զարգացման հաջորդական փուլեր լինեն, այլապես սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները կարող են որակազրկել ստեղծված տնտեսական արդյունքները: Այսպիսով, տնտեսական զարգացման բոլոր փուլերում մակրոտնտեսական քաղաքականությունը անհրաժեշտ է կառուցել քանակական և որակական զարգացման միասնական տիրույթում՝ «նախ քանակը, հետո՝ որակը» մոտեցումը փոխարինելով դրանց համադրմամբ: Մակրոտնտեսական հավասարակշռության և տնտեսական անվտանգության տեսանկյունից աճի որակը պայմանավորված է տնտեսության աճի կետերում ներդրումների արդյունավետ կառուցվածքով և ներգրավված միավոր ներդրման դիմաց ստացված առավելագույն սոցիալ-տնտեսական արդյունքով: Տնտեսական աճի որակը ենթադրում է ազգային տնտեսության կառուցվածքի պրոգրեսիվ՝ որակական փոփոխություններ, ինչպես նաև աճի սոցիալական արդյունավետության բարձրացում՝ բնակչության կյանքի որակի և կենսամակարդակի աճ:

Աճի որակը պահանջում է նաև արտադրողականության դերի կարևորում: «Արտադրողականությունը ամեն ինչ չէ, սակայն երկարաժամկետ կտրվածքում այն համարյա ամեն ինչ է…»: Արտադրողական տնտեսությունը «խելացի աշխատող» տնտեսությունն է, ոչ թե՝ «շատ աշխատող» տնտեսությունը: Այսպիսով, տնտեսության արտադրողականության աճի աղբյուրների հետևողական որոնումը տնտեսական քաղաքականության գերակա խնդիրներից մեկն է[1]:

Ատենախոսության երկրորդ՝ *«ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման և ներդրումային գործունեության իրականացման հիմնախնդիրները»* գլխում հեղինակի կողմից հետազոտվել է ՀՀ տնտեսական զարգացման դինամիկան, տնտեսական աճի որակն ու կառուցվածը, ինչպես նաև ներդրումների կառուցվածքային կատարելագործման միտումներն ու ներդրումային գործունեության իրականացման հիմնախնդիրները տնտեսության իրական

[1] The Future Of Productivity; OECD; 2015, p. 11-12

հատվածում: Իրականացվել է խնայողությունները ներդրումների փոխարկելու մակրոտնտեսական պայմանների գործոնային վերլուծություն՝ ընդգծելով եկամուտների որոշիչ դերը և տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները:

Ներդրումային գործընթացի կառավարումը փուլային դինամիկ զարգացող մեխանիզմների սիներգետիկական համալիր է, որտեղ պետք է ապահովված լինեն մի շարք կարևոր մակրոտնտեսական նախադրյալներ: ՀՀ տնտեսության ռազմավարական նպատակներից մեկը այսօր որակյալ աճ ապահովող իրական հատված ունենալն է: Հանրապետության տնտեսության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում տնտեսական աճը ըստ տնտեսության առանձին ոլորտների տարբեր է եղել: Մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածի կարևոր ոլորտներից գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը մասամբ, իսկ շինարարության ոլորտը, հատկապես, իրեն սպասարկող այլ ենթաճյուղերի հետ միասին ուղղակի և անուղղակի կերպով ապահովել են տնտեսական աճ երկրում: Հետճգնաժամային տարիների կառուցվածքային տեղաշարժերի շնորհիվ տնտեսության զարգացման բնութագիրը էականորեն փոխվել է: Արագացված աճի փուլից տնտեսության մի շարք ենթաճյուղեր փորձ են կատարել անցում կատարել զարգացման ավելի հասուն փուլեր՝ քանակական արագ աճը փոխարինելու կայուն և որակյալ աճի փուլով, սակայն տնտեսությունում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները ոչ միայն ընդհատել է վերարտադրության գործընթացի փուլային զարգացման ընթացքը՝ ընդգծելով տնտեսության կառուցվածքային կատարելագործման կարևորությունը, այլև ավելի են սրել վերարտադրության կայունության ապահովման հիմնահարցը:



	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ծառայություններ	32.4	31.1	32.5	34.3	43	41.9	42.4	42.7	43.2	47.4	48.1	51.10
Շինարարություն	21.6	26.7	25.6	27.1	18.8	16.9	12.6	12.2	11.2	9.3	9.5	8.00
Արդյունաբերություն	18.7	17.3	15.7	13	13.6	14.9	16	17.2	17.1	16	16.3	16.70
Գյուղատնտեսություն	18.8	17.9	17.5	15.7	16.2	16.9	20.7	19.1	19.6	18.1	17.3	16.00

Գծապատկեր 1.
ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ տնտեսության հիմնական ոլորտների/տոկոսներով/ 2005-2016թթ. ընթացքում [2]

Հետճգնաժամային տարիներին թե՛ տնտեսության, և թե՛ տնտեսական աճի կառուցվածքում էական փոփոխություններ են արձանագրվել. շինարարության

[2]Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները հաշվարկված են առանց զուտ անուղղակի հարկերի

տեսակարար կշռի նվազումը փոխարինվել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների որոշ ենթաճյուղերի աճով: Ընդ որում, շինարարության անկումը զուգակցվելով վերջինիս սպասարկող այլ տնտեսության ենթաճյուղերի զարգացման զսպմամբ, տնտեսական աճի վրա բազմակի ազդեցություն է ունեցել:

Տնտեսությունում ներգրավված ներդրումների արդյունքում ապահովված սոցիալ-տնտեսական արդյունքը կարճաժամկետ կտրվածքով երկրում կարողացել է որոշ չափով զարգացման նախադրյալներ ապահովել, սակայն երկարաժամկետ ժամանակահատվածում տնտեսության համակարգային բնույթ ունեցող հիմնախնդիրները որակազրկել են արձանագրված քանակական առաջընթացը: Ներդրումների ներգրավումը տնտեսական աճի ապահովման քանակական գործոն է, իսկ ներդրումների արդյունավետ կառուցվածքը՝ որակական: Այսպիսով, որակյալ տնտեսական աճի հիմնական աղբյուրը կապիտալի օգտագործման արդյունավետության բարձրացումն է:



	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ծառայություններ	3.70%	4.60%	4.00%	2.90%	0.30%	1.90%	2.60%	2.80%	1.60%	3.0%	0	1.9%
Շինարարություն	5.40%	8.10%	4.50%	1.80%	-11.40%	0.60%	-2.10%	0.60%	-0.80%	-0.5%	-0.30%	-1.0%
Գյուղատնտեսություն	2.50%	-0.10%	1.70%	0.20%	0.00%	-2.20%	2.40%	1.90%	1.50%	1.1%	2.40%	-1.00%
Արդյունաբերություն	1.40%	-0.20%	0.60%	0.40%	-1.00%	1.30%	2.30%	1.10%	1.10%	-0.1%	1.20%	0.80%

Գծապատկեր 2.

Տնտեսության հիմնական ոլորտների՝ ՀՆԱ-ի աճին նպաստման չափը /տոկոսային կետով/ 2005-2016թթ. ընթացքում [3]

Համաձայն վիճակագրության՝ տնտեսության իրական հատվածում ներգրավված ներդրումները և վերջինիս ապահոված սոցիալ-տնտեսական արդյունքը երկարաժամկետ կտրվածքում հանրապետությունում չի կարողացել լուծել առկա կառուցվածքային խնդիրները: 2005-2016թթ. ընթացքում ներգրավված ներդրումները տնտեսությունում եթե անգամ տնտեսական աճ և նոր հավասարակշռության վիճակ ապահովել են, ապա այն եղել է կարճաժամկետ և ոլորտային: Կատարված օտարերկրյա ներդրումների գերակշիռ մասը /մոտ 90%/ կենտրոնացվել է տնտեսության երկու՝ արդյունաբերության ու ծառայությունների ոլորտներում, այնինչ տնտեսական աճը հիմնականում ապահովել են գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտները: Արդյունաբերության ոլորտում ստեղծված ավելացված արժեքը անհամեմատ զիջում է գյուղատնտեսության ոլորտում ստեղծված

[3] Գծապատկերները կազմվել են հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ վիճակագրության հիման վրա. աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005-2017թթ. հունվարին» հրապարակումներ:

արդյունքին: Այսինքն, այս ոլորտում կատարված ներդրումները արդյունավետորեն չեն օգտագործվել, չեն ստեղծել բավարար ավելացված արժեք և նպաստել ամբողջական առաջարկի խթանմանը: Պատճառներից մեկը կապիտալի կենտրոնացումն է հանքարդյունաբերության ոլորտում: Շինարարության ոլորտում ևս կապիտալի ներհոսքերը շարունակվել են, չնայած վերջինիս տեսակարար կշիռը զգալի զիջում է արդյունաբերության և ծառայությունների ոլորտների համապատասխան ցուցանիշին: Այսուհանդերձ, ներդրումները հոսել են տնտեսության այն ոլորտներ, որոնք ներդրողների տեսանկյունից առավել հեռանկարային և շահութաբեր են համարվել:

Աղյուսակ 1.

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները ըստ տնտեսության ոլորտների/տեսակարար կշիռը /2005-2016թթ./[4]

	Արդյունաբեր.	Գյուղատնտ.	Շինար.	Ծառայությ.
2005թ.	46.80%	0.01%	4.10%	49.09%
2006թ.	39.90%	0.10%	3.90%	56.10%
2007թ.	47.30%	0.00%	0.20%	52.50%
2008թ.	49.10%	1.90%	0.30%	48.70%
2009թ.	35.10%	0.90%	0.10%	63.90%
2010թ.	49.00%	0.80%	0.50%	49.70%
2011թ.	52.10%	0.50%	0.40%	47.00%
2012թ.	37.00%	4.90%	2.40%	55.70%
2013թ.	42.85%	1.40%	5.18%	50.61%
Օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը 2014-2016թթ.				
2014թ.	75.80%	3.30%	16.70%	4.20%
2015թ.	80.30%	10.60%	-22.00%	31.10%
2016թ.	30.50%	5.00%	11.50%	53.00%

Այսպիսով, տնտեսական զարգացման այս ամբողջ ժամանակահատվածում ՀՀ մակրոտնտեսական քաղաքականությունը չի կառուցվել տնտեսության քանակական ու որակական զարգացման միասնական տիրույթում: Տնտեսության իրական հատվածում ներգրավված ներդրումները ապահովել գերազանցապես քանակական աճ, իսկ տնտեսության կառուցվածքը որակապես կատարելագործվել և նպաստել է տնտեսական զարգացման ավելի բարձր հարթության տեղաշարժին միայն սահմանափակ չափով: Տնտեսության կառուցվածքային կատարելագործման հիմնախնդիրների արդյունքում եկամուտների մակարդակի աճը եղել է

[4] Աղյուսակը կազմվել են հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ վիճակագրության հիման վրա. աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004-2017թթ. հունվար-փետրվարին» հրապարակումներ:

սահմանափակ և անհավասարակշիռ: Համաձայն վերլուծության արդյունքների՝ տնտեսական աճը երկրում ինքնանպատակ բնույթ է ունեցել, աճի արդյունքները զարգացման նախադրյալներ չեն ապահովել, չեն նպաստել եկամուտների մակարդակը աճին և ապահովել «սերունդների համերաշխ զարգացում»: Տնտեսական աճի որակական բնութագիրը ցածր է եղել. տնտեսությունում չեն ապահովվել պրոգրեսիվ՝ որակական կառուցվածքային փոփոխություններ, ցածր է եղել նաև սոցիալական արդյունավետության մակարդակը՝ բնակչության կենսամակարդակի /եկամուտների/ և կյանքի որակի աճը, աճով ապահովված սոցիալ-տնտեսական արդյունքների արդարացի բաշխումը: Ստացվում է, տնտեսական աճով ձեռք բերված արդյունքները չեն ծառայեցվել զարգացման նպատակներին, քանի որ գործընթացի կառավարման մեխանիզմները արդյունավետորեն չեն գործել:

Տնտեսական աճը երկրում որակյալ և կայուն է ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործման դեպքում: Հայրենական ներդրողները ավելի շատ են հակված երկարաժամկետ և բարեխիղճ ներդրումներ կատարելու, քան օտարերկրա ներդրողները: Օտարերկրյա կապիտալը չի կարող հանդիսանալ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ ու զարգացում ապահովող գործոն: Ուստի, ինչպիսի մակրոտնտեսական քաղաքականություն էլ իրականացվի, պետք է հայրենական ներդրողների շահերը միշտ առաջնահերթ բավարարված լինեն: Խնայողությունները ներդրումների փոխարկման մեխանիզմների կիրառման բազմաթիվ մոտեցումներից ՀՀ տնտեսությունում հատկապես էական է անհատ ներդրողների դերը: Ինքնաֆինանսավորումը շուկայական տնտեսություններում խոսում է տնտեսության զարգացվածության աստիճանի մասին: Ներքին ռեսուրսների կենտրոնացումն ու տեղաբաշխումը տնտեսության իրական հատվածում ՀՀ ներդրումային քաղաքականության գլխավոր ռազմավարական գերխնդիրը պետք է հանդիսանա: Սակայն մակրոտնտեսական զարգացման առանձնահատկությունները երկրում էականորեն դժվարացնում են խնայողությունների կառավարման որևէ մեխանիզմի կիրառումը: Տնտեսության մարտահրավերներից մեկը խնայողությունների հավաքագրումը խթանող միջավայրի ստեղծումն է: Եվ չնայած վերջինիս կարևորությանը՝ այսօր երկրում շեշտը շարունակում են դնել օտարերկրյա կապիտալի խթանման տնտեսական քաղաքականության վրա, իսկ տնտեսվարողների համար մակրոտնտեսական պայմանները շարունակում են անբարենպաստ մնալ: Սպառման ֆինանսավորման համար ազգային եկամուտների անբավարար մակարդակը անհրաժեշտ է դարձնում ներքին խնայողությունների հաշվին տնտեսության ֆինանսավորման փոխարինումը ֆինանսավորման արտաքին աղբյուրներով: Ստացվում է օտարերկրյա կապիտալը լծակ է, որ կկարողանա տնտեսությունում ապահովել եկամուտների մակարդակի աճ, ինչն էլ նախադրյալներ կստեղծի ներդրումների ներգրավման ներքին աղբյուրների՝ խնայողությունների խթանման համար: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ խնայողությունների նորմի խթանումը եկամուտների միջին մակարդակ և գերկենտրոնացում ունեցող երկրում կարող է սահմանափակել ընթացիկ սպառումը և կրճատել համախառն պահանջարկը, ինչը, բնականաբար, կզսպի նաև տնտեսական

աճը: Այսինքն, խնայողությունների նորմը խթանող տնտեսական քաղաքականությունը կարող է խթանել տնտեսական աճն ու զարգացումը առավել երկարաժամկետ հեռանկարում: Իսկ կարճաժամկետ և միջնաժամկետ զարգացումները վերհսկելու համար անհրաժեշտ են մակրոտնտեսական մի շարք նախադրյալների ապահովում:

Համաձայն մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների վերլուծության արդյունքների՝ տնտեսվարողների խնայողական վարքագծի վրա ազդող հիմնական գործոնը եկամուտներն են, ինչն էլ ապացուցում է քեյնյան տեսական պնդումները: Սակայն հայրենական պրակտիկան առանձնանում է նաև որոշակի առանձնահատկություններով: Մասնավորապես, եկամուտների աղբյուրները որոշակիորեն ձևափոխված են. էական դեր ունեն ինչպես ոչ ֆորմալ եկամուտները, այնպես էլ՝ տրանսֆերտները: Ավելին, տնտեսվարողների խնայողական վարքագիծը ձևավորում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են նաև ապագա եկամուտները, որը ներկայացվում է Ֆիշերի սպառման ընտրության տեսության մեջ: Վերջինս բացատրվում է հանրապետությունում աշխատանքային միգրացիայի չափազանց բարձր տեմպերով: Տնտեսվարողների վարքագիծը ձևավորում են նաև մակրոտնտեսական պայմանները և սպասումները: Այս առումով, առավել ազդեցիկ և կարևոր են նախազգուշական շարժառիթները, այսինքն՝ խնայողությունները, որոնք կատարվում են հետաձգված սպառման, ծերության և երեխաների ապագայի ապահովման նպատակներով: Հաշվի առնելով հանրապետության տնտեսվարողների հոգեբանական և վարքագծային առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսական հնարավորությունները՝ կարելի է եզրակացնել, վերջիններս նախընտրությունը տալիս են պասիվ խնայողություններին: Իսկ ակտիվ խնայողությունները, որոնք հանդես են գալիս ավանդների տեսքով, ճիշտ է աճի միտում են դրսևորում, սակայն ծավալները մեծ չեն և տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման աղբյուր չեն կարող ծառայել: Տնտեսվարողների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը համախառն տնօրինող եկամտի աճին համասնորեն կայուն աճի միտում են դրսևորել՝ համախառն խնայողությունների համեմատական կայունության պայմաններում: Կարելի է եզրակացնել, որ տնտեսվարողների խնայողության նկատմամբ հակվածությունը զգալի ցածր է և թույլ է կորելացված եկամուտների հետ: Պատճառները խիստ բազմազան են՝ պայմանավորված ինչպես եկամուտների ցածր մակարդակով և անհավասարաչափ բաշխվածությամբ, այնպես էլ եկամուտների և սպառման հարաբերակցությամբ: Այսպիսով՝ կազմակերպված խնայողությունների խթանումը, ինչպես նաև խնայողությունները ներդրումների փոխարկելու մեխանիզմների կատարելագործումը ռազմավարական քայլ է, որը էական ազդեցություն ունի տնտեսական աճի և զարգացման վրա:

Ակտիվ խնայողությունների նկատմամբ հակվածության խթանումը համեմատականորեն կարող է կրճատել սպառումը, սակայն որոշակի ժամանակային լագով կաճի նաև տնտեսությունում կապիտալի կուտակման մակարդակը, արդյունքում նաև արտադրությունը, կաճեն եկամուտները՝ խթանելով սպառումը:

Վերջին հաշվով, տնտեսությունը անցում կկատարի նոր հավասարակշիռ վիճակի՝ ավելի բարձր եկամուտների պայմաններում: Ստացվում է, տնտեսական աճի խթանման և նոր հավասարակշիռ վիճակի հասնելու համար անհրաժեշտ է ներգրավել նոր ներդրումներ՝ ընթացիկ սպառման կրճատման հաշվին: Գործընթացի կազմակերպման համար, այնուամենայնիվ, պետք է եկամուտների որոշակի մակարդակ ապահովված լինի տնտեսությունում: ՀՀ տնտեսությունում եկամուտների ցածր մակարդակը հնարավորություն չի տալիս օգտագործել խնայողությունների հաշվին տնտեսության ֆինանսավորման լծակը, ուստի անհրաժեշտ է ապահովել նախադրյալներ եկամուտների մակարդակի բարձրացման համար, օգտագործելով եկամուտների մակարդակի բարձրացումը խթանող մեկ այլ գործիք՝ համախառն արտաքին պահանջարկի՝ արտահանման խթանումը:

Իհարկե, արտահանման վիճակագրությունը բավական խոսուն է քանակական ցուցանիշների բարելավման տեսանկյունից, սակայն արտահանման որակական բնութագրիչները այնքան էլ բարձր չէ: 2016թ. ՀՆԱ-ն ավելացել է 127.5%-ով /2005թ. համեմատ/, իսկ արտահանումը՝ 97.5%-ով: Ստացվում է ՀՆԱ-ի 1% աճը ապահովել է 0,76% արտահանման աճ: Այսինքն, տարիներ շարունակ արձանագրված տնտեսական աճը երկրում չի նպաստել արտահանման ծավալների ավելացմանը: Այսպիսով, հանրապետությունը ՀՆԱ-ի միավոր աճի հաշվով կորցնում է զարգացման հեռանկարները: Իսկ որպեսզի երկրի տնտեսությունը դուրս բերվի արտահանման ներուժը սպառող և «փոքրացող» տնտեսության կարգավիճակից, և տնտեսական զարգացման ուղին կառուցվի արտահանման ներուժի ու համաշխարհային տնտեսության լայն և ՀՀ տնտեսության համար անսահմանափակ հնարավորությունների արդյունավետ օգտագործմամբ, անհրաժեշտ է արտաքին ազդեցություններից հնարավորինս զերծ և ոչ զգայուն ոլորտներում արտահանման նախադրյալներ ստեղծել[5]:

Տնտեսության էվոլյուցիոն զարգացման ներկա փուլում ներքին պահանջարկի վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելը անհրաժեշտ է կատարելագործել, որը առավելագույն արդյունավետությամբ հնարավոր կլինի զուգակցել արտահանման վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելի հետ: Ներքին պահանջարկի խթանումը ենթադրում է վճարունակ պահանջարկի խթանում, այսինքն՝ եկամուտների մակարդակի աճ, այսինքն՝ կենսամակարդակի բարձրացում: Տարիներ շարունակ երկրում արձանագրված տնտեսական աճի տեմպերը նպաստել են բնակչության առավել ապահովված խավի եկամուտների բարձրացմանը, և ոչ միայն աղքատության ավելացման, այլև՝ աղքատ ու հարուստ խավերի միջև եկամուտների տարբերության խորացման պատճառ են դարձել: Բնականաբար, նմանօրինակ տնտեսական զարգացումները հանգեցնելու են գնողունակ պահանջարկի կրճատմանը, ինչն էլ՝ կզսպի ՀՆԱ-ի հետագա աճը:

[5] Սարգսյան Հ., Մարկոսյան Ա. / Հայաստանի Տնտեսության Վերափոխումները և Վերելքի Հեռանկարները.- Եր.: «Զանգակ» հրատ., 2014.- 552 էջ – էջ 270-271

Հետճգնաժամային ակտիվացման տարիներին՝ 2013-2016թթ. տնտեսական աճը հիմնականում ապահովվել է արտաքին պահանջարկի՝ արտահանման հաշվին: Տնտեսական աճի որակը էապես ձևափոխվել է. նախաճգնաժամային տնտեսական աճը մեծամասամբ պայմանավորված է եղել ներքին պահանջարկով՝ սպառմամբ, իսկ 2013-2016թթ.՝ հիմնականում արտաքին պահանջարկով՝ արտահանմամբ: 2013-2016թթ. վերջնական սպառումը իրական արտահայտությամբ տարեկան միջինում աճել է 1.1%-ով: Արդյունքում՝ ՀՆԱ-ի տարեկան միջինում 3.2% աճի պայմաններում, որի հետևանքով համախառն պահանջարկի կառուցվածքում սպառման մասնաբաժինը տարեցտարի նվազել է՝ 2013-2016թթ. միջինում կազմելով 94.6%: Ներքին պահանջարկի՝ սպառման խթանումը ենթադրում է վճարունակ պահանջարկի խթանում, այսինքն՝ եկամուտների մակարդակի աճ և համահավասարեցում, աղքատության կրճատում, աշխատանքի արտադրողականության աճ: Համաձայն կանխատեսումների, միջնաժամկետ հորիզոնում ամբողջական պահանջարկի աճը պայմանավորված կլինի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճով[6]:

Ենթադրվում է, որ տնտեսական աճի արդյունքը եկամուտների մակարդակի բարձրացումն է, ինչը նպաստում է թե՛ գնողունակ պահանջարկի, թե՛ խնայողությունների նորմի ավելացմանը: Բարձր պահանջարկի առկայությունը հնարավորություն է տալիս ընդլայնել արտադրությունը, ինչի արդյունքում էլ կավելանան նաև եկամուտները: Իսկ որքան ավելի մեծ լինեն եկամուտները, այնքան ավելի մեծ կլինեն նաև խնայողությունները և ներդրումներ կատարելու հնարավորությունները: Մեկ այլ տեսանկյունից՝ որքան ավելի մեծ լինեն ներդրումները, այնքան ավելի մեծ կլինեն արտադրության հնարավորությունները, հետևաբար՝ նաև առաջարկը, ինչն էլ կսրի մրցակցությունն ու առավել արդյունավետ արտադրության կազմակերպման խթաններ կապահովվի:

Ավանդական մոտեցման համաձայն եկամուտների աճը դիտարկվում է որպես տնտեսական աճի արդյունք: Սակայն վերարտադրության գործընթացում կարևոր է նաև հակառակ ազդեցության գնահատումը. եկամուտների մակարդակի ազդեցությունը տնտեսական զարգացման և մակրոտնտեսական հավասարակշռության վրա: Եկամուտների շարժընթացը մակրոտնտեսական քանակական և որակական փոփոխությունների կարևոր սոցիալ-տնտեսական չափորոշիչներից մեկն է: Վերջինիս կառուցվածքը ըստ սպառման և խնայման բաղադրիչների, մեծապես պայմանավորված է յուր ծավալով, այն տիրապետողի սոցիալ-տնտեսական շարժառիթներով և հասարակական դիրքով: Համախառն ներքին պահանջարկի ձևավորումը կախված է եկամուտների կառուցվածքում սպառման բաղարիչի դերի ակտիվացմամբ, իսկ ներքին ներդրումների խթանման հնարավորությունները՝ խնայողության նկատմամբ տնտեսվարողի դիրքորոշմամբ: Իհարկե, վերջիններս ուղղակիորեն կախված են եկամուտների մեծությունից:

[6] ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2017-2019թթ., Հավելված ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 723 – Ն որոշում – էջ. 20-31

Այսպիսով, եկամուտների մակարդակը տնտեսական զարգացման գործընթացի անընդհատության ապահովման կարևոր նախադրյալներից մեկն է:

Ատենախոսության երրորդ՝ *«Ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման գործընթացում»* գլխում հեղինակի կողմից վերլուծվել են հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման նախադրյալները, առանձնացվել են ՀՀ տնտեսության իրական հատվածի այն ոլորտները, որոնք կայուն, որակյալ տնտեսական աճի և մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման տեսանկյունից ներդրումների ներգրավման արդյունավետ ուղիներ են: Հիմնավորվել են տնտեսական աճի նկատմամբ զգայուն, արտահանելի ոլորտներում որակյալ տնտեսական աճ և մակրոտնտեսական հավասարակշռություն ապահովող ներդրումների տեղաբաշխման ուղղությունները, ինչպես նաև ուսումնասիրվել են եկամուտների մակարդակի բարձրացման գործոններն ու խնայողությունները ներդրումների փոխարկելու մակրոտնտեսական նախադրյալները:

ՀՀ տնտեսությունը օժտված է անկատարություններով, որոնց լուծում կարող է տալ միայն պետության «տեսանելի ձեռքը», քանի որ Ա.Սմիթի «անտեսանելի ձեռքը» չի կարող ապահովել մակրոտնտեսական բնույթի մի շարք հիմնախնդիրների լուծումը, այդ թվում՝ արդյունավետության բարձրացման, իրավահավասարության և արդարության ապահովման, մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի խթանման[7]:

Երկրի տնտեսական աճը նախ և առաջ պայմանավորված է առաջարկի գործոններով, այդ թվում՝ մարդկային կապիտալի քանակով և որակով, ներդրումների ծավալով և բաշխվածությամբ, կիրառվող տեխնոլոգիաներով, ինչպես նաև այն մակրոտնտեսական միջավայրով, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նվազեցնում են կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը: Սակայն անհրաժեշտ է տարբերել աճի հնարավորությունը իրական աճից: Իրական աճի համար կարևոր են պահանջարկի և բաշխման գործոնները: Երկրի արտադրական ներուժի իրացումը պահանջում է նպատակային և արդյունավետ ներդրումներ: Այսպիսով, կարևոր է ոչ միայն ռեսուրսների ներառումը տնտեսական շրջանառության մեջ, այլև՝ դրանց արդյունավետ օգտագործումը: Այսպիսով, որպեսզի երկրում հնարավոր լինի ապահովել միաժամանակ թե՛ եկամուտների, և թե՛ խնայողությունների աճ, անհրաժեշտ է նախ ընթացիկ մակրոտնտեսական հավասարկշռության, ապա նաև՝ աճի որակական կատարելագործման նախադրյալներ ապահովել:

Տնտեսության զարգացման յուրաքանչյուր հաջորդ մակարդակը պետք է լինի տնտեսական զարգացման նախորդ մակարդակի տրամաբանական շարունակությունը: Համախառն ներքին պահանջարկի բաղադրիչներից պետական ծախսերի և ներքին սպառման խթանման տնտեսության հնարավորությունները

[7] Samuelson Paul A., Nordhaus William D. – Economics, 19th ed., Boston; published by McGraw – Hill / Irwin, 715p.- p. 28-38

կարճաժամկետ հեռանկարում խիստ սահմանափակ են, ինչն էլ կարևոր է դարձնում տնտեսական քաղաքականություն կառուցելիս ուշադրության դարձնել համախառն արտաքին պահանջարկի՝ արտահանման վրա: Տնտեսական վերարտադրության գործընթացի կատարելագործման, մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի խթանման բազմաթիվ մոտեցումներից սույն վերլուծության շրջանակներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է արդյունավետ պահանջարկի մակարդակի ստեղծման նախադրյալների ապահովման հիմնախնդրի վրա: Տվյալ տեսանկյունից պահանջարկի կարգավորումը ենթադրում է և՛ ներքին, և՛ արտաքին պահանջարկի կառավարում:

Տնտեսության պետական կարգավորման Ջ.Քեյնսի գաղափարները սկզբունքորեն փոխեցին շուկայական տնտեսության վերաբերյալ դասական հայացքները: Ապացուցվեց տնտեսական անկման ինքնակասեցման անհնարինությունը և պետական միջամտության անհրաժեշտությունը համախառն պահանջարկի կառավարման գործընթացում: Սակայն պրոֆեսոր Վ. Բոստանջյանի կարծիքով, արդի իրավիճակում առկա տնտեսական հիմնախնդիրների լուծման որակապես նոր դեղատոմսեր են անհրաժեշտ, որոնք սկզբունքորեն կտարբերվեն քեյնսյան տեսության սկզբունքներից[8]:

Հետազոտության շրջանակներում իրականացված էկոնոմետրիկ վերլուծությունները հնարավորություն են տվել գնահատելու ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքի և համախառն պահանջարկի ռեգրեսիոն կախվածությունը. էկոնոմետրիկ վերլուծության արդյունքների համաձայն գործում է ռեգրեսիոն կախվածություն համախառն պահանջարկի և ՀՆԱ-ում կապիտալի կուտակման նորմի միջև:

$$\Delta\,\textit{Համախառն կուտակում} = 0.248411 + 1.618662\,\Delta\,\textit{արտահանում} + 1.948714\,\Delta\,\textit{սպառում}$$

Վերլուծության արդյունքները հեղինակին հնարավորություն են տվել գնահատելու համախառն պահանջարկի՝ սպառման և արտահանման դերակատարումը ներդրումների խթանման և դրանով իսկ տնտեսական աճի ապահովման գործում:

Այսինքն, կապիտալի կուտակումը արտահանման պոտենցիալ ունեցող տնտեսության ոլորտներում հանրապետությունում տնտեսական աճի ապահովման ուղիներից մեկն է: Համաձայն շուկայավարման սկզբունքների՝ կապիտալը հոսում է դեպի տնտեսության այն ոլորտներ, որոնք առավել գրավիչ են գնահատվում ներդրողների կողմից: Հայաստանում ներդրումային ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը տվյալ տեսանկյունից ուղղակիորեն պայմանավորած է արտահանման պոտենցիալ ապահովող տնտեսության ոլորտներում վերջիններիս բաշխվածությամբ:

[8] Բոստանջյան Վ. Բ. / Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Այլընտրանք հետազոտական կենտրոն:-Եր., ԵՊՀ հրատ., 2017, 364 էջ – էջ 10-11



Գծապատկեր 3.

ՀՆԱ-ի աճի, համախառն պահանջարկի և համախառն կուտակման դինամիկան 2004-2016թթ. եռամսյակային տվյալներ[9]

Ավելին, արտահանման դիվերսիֆիկացիայի խնդրի լուծմամբ երկրում հնարավոր կլինի ապահովել նաև եկամուտների մակարդակի աճ. առկա է դրական կորելյացիոն կապը արտահանման դիվերսիֆիկացիայի և եկամուտների մակարդակի միջև: Հետագայում նաև ապացուցվեց, որ զարգացող երկրներում արտահանման դիվերսիֆիկացիայի աճը ապահովում է եկամուտների պատասխան աճի: Երկրի արտահանման կառուցվածքը լրջագույն ազդեցություն ունի վերջինիս տնտեսական աճի վրա: Եկամուտների խթանումն էլ կնպաստի տնտեսության ֆինանսավորման ներքին աղբյուր համարվող խնայողությունների նորմի մեծացմանը՝ որպես տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման ներքին աղբյուր[10]:

Եկամուտների աճը տնտեսությունում կարևոր կառուցվածքային տեղաշարժերի կարող է հանգեցնել՝ ի հաշիվ աճի գործոնի աստիճանական փոփոխության: Զարգացման արագ աճի փուլը հաղթահարելը, իհարկե, շատ կարևոր է զարգացող տնտեսությունների համար, քանի որ ստեղծվում է պոտենցիալ կայուն և որակյալ աճի ապահովման համար: Ապահովելով եկամուտների անհրաժեշտ աճը՝ արտահանումը դադարում են տնտեսության համար վճռորոշ դեր խաղալուց և աստիճանաբար փոխարինվում են վճարունակ ներքին շուկայով: Այսինքն, աճի հիմնական գործոնը կդառնա ներքին պահանջարկը՝ սպառումը: Այսինքն, հանրապետությունում ներքին սպառման խթանման անհրաժեշտությունը պետք է վարվող մակրոտնտեսական քաղաքականության երկարաժամկետ նպատակներից մեկը հանդիսանա:

Արդեն իսկ անդրադարձ կատարվել է ՀՆԱ-ում կապիտալի կուտակման տեսակարար կշռի ավելացման կարևորությունը՝ որպես եկամուտների մակարդակի,

[9] Գծապատկերը կազմվել են հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ վիճակագրության հիման վրա. աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004-2017թթ. հունվար-մարտին» հրապարակումներ:

[10] Cadot. O, Carrère, C and Strauss-Kahn, V (2007), “Export Diversification: What’s Behind the Hump?”, CEPR Discussion Paper SeriesNo. 6590., p. 22

ապա նաև՝ խնայողությունների նորմի բարձրացման նախադրյալներ ապահովող գործոնի: Իսկ դրական կորելյացիոն կապը ներքին սպառման և կապիտալի կուտակման մակարդակների միջև հնարավորություն կտա խթանելու ներքին ներդրումները: Հանրապետությունում արտահանումից ստացվող եկամուտները տարիներ շարունակ խթանել են ներքին պահանջարկը: Սակայն սպառվել են մեծամասամբ ներմուծվող ապրանքները, իսկ տեղական արտադրությունը զարգացել է այնքանով, որքանով կարողացել են դիմադրել ներքին օլիգոպոլիստական կառույցների ճնշմանը և ներմուծվող ապրանքների մրցակցությանը: Այնինչ՝ ներքին արտադրության սպառումն է տնտեսության զարգացման հիմնական երաշխիքը: Այսինքն, ներքին սպառման խթանումը պետք է ուղեկցվի ներմուծման սահմանափակմամբ և տեղական արտադրության խթանմամբ:

Աճի որակի վերլուծության շրջանակներում հեղինակը գնահատել է նաև տնտեսության ոլորտային առաձգականությունը տնտեսական աճի նկատմամբ, ապա նաև՝ ներդրումների սոցիալ-տնտեսական արդյունավետությունը:

Մասնավորապես, տնտեսության կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա ներկայացնելու համար ներմուծվել է գործակից, որի միջոցով գնահատվել է տնտեսության ոլորտների՝ տնտեսական աճին նպաստման արդյունավետության աստիճանը: Գործակիցը իրենից ներկայացնում է տնտեսության ոլորտային առաձգականությունը և ցույց է տալիս, թե ինչպես է տնտեսական աճը արձագանքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններին:

$$Գ_{ոլորտ} = \frac{\text{Ոլորտի տնտեսական կշիռը ՀՆԱ-ում /\%/}}{\text{Ոլորտի ՀՆԱ-ի աճին նպաստման չափը /\%/}} = \frac{Ոլորտ}{ՀՆԱ} \div \frac{\Delta Ոլորտ}{\Delta ՀՆԱ} = \frac{\Delta ՀՆԱ}{ՀՆԱ} \div \frac{\Delta Ոլորտ}{Ոլորտ} = \frac{d\,ՀՆԱ}{d\,Ոլորտ} = E_{ոլորտ}$$

Աղյուսակ 2.

Տնտեսության ոլորտային առաձգականության դինամիկան 2004-2016թթ.

	Գյուղատնտ.	Արդյունաբ.	Շին.	Ծառայությ.
	$E_{գյուղ.}$	$E_{արդյ.}$	$E_{շին.}$	$E_{ծառ.}$
2004	0.7	5.2	0.8	0.8
2005	1.0	1.9	0.6	1.2
2006	22.6	-22.4	0.4	0.9
2007	1.4	3.6	0.8	1.1
2008	5.5	4.5	1.0	0.8
2009	0	-1.8	-0.2	0
2010	-0.2	0.3	0.7	0.6
2011	0.4	0.4	-0.3	0.8
2012	0.7	1.1	1.5	1.1
2013	0.5	0.5	-0.5	0.9
2014	0.4	-5.9	-0.6	0.6
2015	0.22	0.4	-0.9	0
2016	-0.1	0.2	-0.1	0.2

Ըստ տնտեսության ոլորտների գործակցի գնահատման արդյունքում պարզվել է, որ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտները

հետճգնաժամային ժամանակահատվածում զգալի ճկունություն են դրսևորել, և ներդրումների արդյունավետ տեղաբաշխումը տվյալ ոլորտներում տնտեսական աճի ապահովման կարևոր ուղիներից մեկն է: Համաձայն հաշվարկների, մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի նկատմամբ առաձգական ոլորտներ են համարվել շինարարությունն ու ծառայությունների ոլորտները, իսկ հետճգնաժամային զարգացումները էականորեն փոխել է տնտեսական զարգացման որակը: Տնտեսական աճի նկատմամբ առավել առաձգական է դարձել գյուղատնտեսության ոլորտը, զգալիորեն բարելավվել է արդյունաբերության ոլորտի ցուցանիշը, իսկ շինարարության ոլորտում իրավիճակը շարունակաբար վատթարացել է:

Ներգրավված ներդրումների կառուցվածքային տատանումների ազդեցությունը տնտեսության իրական հատվածի կառուցվածքային փոփոխության վրա գնահատելու նպատակով հաշվարկվել է սույն գործակիցը.

$$Գ_{ոլորտ} = \frac{\Delta\%\ \text{Ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ–ում}}{\Delta\%\ \text{Ներդրումների տեսակարար կշիռը ոլորտում}} > 0$$

Ինչպես ցույց են տվել 2004-2016թթ. համար հաշվարկված ցուցանիշները, մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածում իրականացված ներդրումները արդյունավետ չեն եղել: Հատկապես անարդյունավետ են եղել արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներգրավված ներդրումները, չնայած արդյունաբերության ոլորտում հետճգնաժամային շարժընթացը դրական է:

Վերոնշյալ ցուցանիշը բնութագրում է ներդրումների կառուցվածքի ազդեցությունը տնտեսության կառուցվածքի վրա: Ցուցանիշը առավել ընդհանրական կներկայացնի իրավիճակը, եթե դիտարկվի ցուցանիշների համալիրի մեջ: Մասնավորապես, հեղինակի կողմից հաշվարկվել է նաև հետևյալ գործակիցը, որը հնարավորություն է տալիս գնահատել ներդրումների կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի կառուցվածքի վրա:

$$Գ_{ոլորտ} = \frac{\Delta\ \text{ՀՆԱ–ի աճին նպաստման չափը /\%/}}{\Delta\ \text{Ներդրումների տեսակարար կշիռը ոլորտում /\%/}} > 0$$

Գործակցի միջոցով գնահատվում է, թե ոլորտում իրականացված ներդրումների տեսակարար կշռի 1% աճը ինչպես է ազդել տվյալ ոլորտի տնտեսական աճին նպաստման ցուցանիշի վրա: Ինչքան ցուցանիշը մեծ լինի, այնքան ներդրումները առավել արդյունավետ են եղել տվյալ ոլորտում: Հաշվարկները վկայում է, որ տնտեսության իրական հատվածի գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում ներդրումների կառուցվածքը բացասական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի կառուցվածքի վրա:

Այսպիսով, համալիր մոտեցմամբ վերոնշյալ գործակիցների հաշվարկման արդյունքում հիմնական գնահատականը այն է, որ տնտեսության իրական հատվածի արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներդրումները արդյունավետորեն չեն տեղաբաշխվել, չեն նպաստել տնտեսական զարգացմանը, իսկ շինարարության ոլորտում ցուցանիշը խիստ տատանողական է եղել՝ պայմանավորված ոլորտի տարեցտարի նվազող դերակատարմամբ: Տնտեսական

աճի ոլորտային առաձգականության գնահատականներն էլ փաստում են, որ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտները հետճգնաժամային ժամանակահատվածում զգալի ճկունություն են դրսևորել, և տվյալ ոլորտներում ներդրումների արդյունավետ տեղաբաշխումը տնտեսական աճի ապահովման զգալի ներուժ է պարունակում: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների զարգացումները սերտորեն փոխկապակցված են: Գյուղատնտեսության զարգացման գործում մեծ դերակատարում ունի վերամշակող արդյունաբերությունը: Վերջինիս ակտիվացումն ու արտահանման ծավալների աստիճանական ավելացումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի *ապրանքայնության մակարդակի* բարձրացմանը:

Ընդհանրացնելով ռեգրեսիոն վերլուծությամբ կատարված եզրակացություններն ու ներկայացված գործակիցների հաշվարկման արդյունքում ստացված գնահատականները՝ կարելի է եզրակացնել, որ արտահանման ներուժ ունեցող, տնտեսական աճի նկատմամբ զգայուն արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում ներդրումների արդյունավետ տեղաբաշխումը կնպաստի որակյալ տնտեսական աճին և զարգացմանը: Ընդ որում, որպես փոքր սպառման շուկա ունեցող երկիր Հայաստանի տնտեսությունը տնտեսական զարգացման շեշտը դնում է արտաքին պահանջարկի՝ արտահանման խթանման վրա: Այնուամենայնիվ, ներքին պահանջարկի վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելի ձևափոխված և կատարելագործված տարբերակ ևս անհրաժեշտ է մշակել, որը առավելագույն արդյունավետությամբ հնարավոր կլինի զուգակցել արտահանման վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելի հետ:

Սակայն, հանրապետությունում առաջարկը առաձգական չէ, երկիրը մոնոպոլիզացված է, գերկենտրոնացված թե՛ եկամտային, և թե՛ կառուցվածքային առումով, ինչն էլ խոչընդոտում է համախառն ներքին պահանջարկի խթանմանը: Արձանագրված քանակական տնտեսական աճի արդյունքները յուրացվում են սահմանափակ տնտեսվարողների շրջանակներում, այսինքն առկա է մրցակցային մշակույթի ձևավորման խնդիր: Իրականում հանրապետությունում ներդրումների ներգրավումը սահմանափակող խնդիրները շատ խորն են իրենց արմատներով. ներդրումային միջավայրում «թաքնված սահմանափակումների» վերացումը երկրի տնտեսության կարևոր մարտահրավերներից մեկն է:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները.

1. Տնտեսական զարգացման այս ամբողջ ժամանակահատվածում ՀՀ մակրոտնտեսական քաղաքականությունը չի կառուցվել տնտեսության քանակական ու որակական զարգացման միասնական տիրույթում: Տնտեսության իրական հատվածում ներգրավված ներդրումները ապահովել են գերազանցապես քանակական աճ, իսկ տնտեսության կառուցվածքը որակապես կատարելագործվել և նպաստել է տնտեսական զարգացման ավելի բարձր հարթության տեղաշարժին միայն սահմանափակ չափով: Տնտեսության կառուցվածքային կատարելագործման հիմնախնդիրների արդյունքում եկամուտների մակարդակի աճը եղել է

սահմանափակ և անհավասարակշիռ: Տնտեսական աճը երկրում սահմանափակ տնտեսվարողների համար է սոցիալ-տնտեսական արդյունքներ ստեղծել, աճի արդյունքները մակրոտնտեսական հավասարակշռության և զարգացման նախադրյալներ չեն ապահովել, չեն նպաստել եկամուտների մակարդակի աճին և ապահովել «սերունդների համերաշխ զարգացում»:

2. Տնտեսության իրական հատվածում ներգրավված ներդրումների ապահոված սոցիալ-տնտեսական արդյունքները երկարաժամկետ կտրվածքում հանրապետությունում չեն կարողացել լուծել առկա համակարգային խնդիրները: Մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի նկատմամբ առաձգական են գնահատվել շինարարության ու ծառայությունների ոլորտները, իսկ հետճգնաժամային զարգացումները էականորեն փոխել է տնտեսական զարգացման որակը: Տնտեսական աճի նկատմամբ զգայուն է դարձել գյուղատնտեսության ոլորտը, զգալիորեն բարելավվել է արդյունաբերության ոլորտի ցուցանիշը, իսկ շինարարության ոլորտում իրավիճակը շարունակաբար վատթարացել է:

3. Իրականացվող ներդրումները ավելի շատ միկրո մակարդակում են եղել արդյունավետ և շահութաբեր: Տնտեսության իրական հատվածի ռազմավարական նշանակություն ունեցող թե՛ գյուղատնտեսության, և թե՛ արդյունաբերության ոլորտներում ներդրումների կառուցվածքը բացասական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի կառուցվածքի վրա. ներդրումները այս ոլորտներում արդյունավետորեն չեն տեղաբաշխվել, չեն նպաստել տնտեսական զարգացմանը: Հետճգնաժամային ցուցանիշներում որոշակի բարելավումներ նկատվել են արդյունաբերության ոլորտում, իսկ գյուղատնտեսության ոլորտը շարունակում է թերֆինանսավորված մնալ:

4. ՀՆԱ-ում կապիտալի կուտակման տեսակարար կշռի ավելացումը՝ որպես եկամուտների մակարդակի, ապա նաև՝ խնայողությունների նորմի բարձրացման նախադրյալներ ապահովող գործոնի, կարևորելով, գնահատվել է համախառն պահանջարկի՝ սպառման և արտահանման դերակատարումը ներդրումների խթանման և դրանով իսկ տնտեսական աճի ապահովման գործում: Համաձայն ստացված գնահատականների՝ համախառն պահանջարկի խթանումն է երկրում կապիտալի կուտակման առավել մեծ աճի ապահովման հիմնական նախադրյալներից մեկը, քանի որ ներքին սպառման խթանումը կարճաժամկետ հեռանկարում եկամուտների ցածր մակարդակով պայմանավորված զարգացման հաջորդ փուլում պետք է ապահովել:

5. Եկամուտների աճը տնտեսությունում կարևոր կառուցվածքային տեղաշարժերի կարող է հանգեցնել՝ ի հաշիվ աճի գործոնի աստիճանական փոփոխության: Զարգացման արագ աճի փուլը հաղթահարելով և ապահովելով եկամուտների անհրաժեշտ աճ՝ արտահանումը դադարում են տնտեսության համար վճռորոշ դեր խաղալուց և աստիճանաբար փոխարինվում են վճարունակ ներքին շուկայով: Այսինքն, աճի հիմնական գործոնը դառնում է ներքին պահանջարկը՝ սպառումը: Այսպիսով, հանրապետությունում ներքին սպառման խթանման

անհրաժեշտությունը պետք է վարվող մակրոտնտեսական քաղաքականության երկարաժամկետ նպատակներից մեկը հանդիսանա:

6. Օտարերկրյա կապիտալը լծակ է, որ կկարողանա տնտեսությունում ապահովել եկամուտների մակարդակի աճ, ինչն էլ նախադրյալներ կստեղծի ներդրումների ներգրավման ներքին աղբյուրների՝ խնայողությունների խթանման համար: Անհրաժեշտ է մակրոտնտեսական քաղաքականությունը կառուցել այն կարևոր սկզբունքի դիտարկմբ, որ օտարերկրյա կապիտալը չի կարող հանդիսանալ երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ ու զարգացում ապահովող գործոն: Ներքին ներդրումների խթանումը տնտեսության իրական հատվածում ՀՀ ներդրումային քաղաքականության գլխավոր ռազմավարական գերխնդիրը պետք է հանդիսանա:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում:

1. Լ. Կարապետյան, «ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնները», «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, «Լիմուշ», Երևան 2011թ., #7(133), էջ 14-16:
2. Լ. Կարապետյան, «Ներդրումների ֆինանսավորման առանձնահատկությունները ՀՀ-ում», «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, «Լիմուշ», Երևան 2011թ., #7(133), էջ 16-18:
3. Լ. Կարապետյան, «ՀՀ առևտրային բանկերի կողմից տնտեսության վարկավորման որոշ հիմնահարցեր», Տնտեսական քաղաքականություն: Տարեգիրք 2012, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, գլխ. խմբ.՝ Հ. Լ. Սարգսյան. - : Եր., ԵՊՀ հրատ., 2013: 570էջ - էջ 141-152:
4. Լ. Կարապետյան, « Օտարերկրյա ներդրումների դերը ՀՀ արտահանման խթանման գործում»: Տարեգիրք 2013, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, գլխ. խմբ.՝ Հ. Լ. Սարգսյան. - : Եր., ԵՊՀ հրատ., 2014: 736էջ - էջ 263-272:
5. Լ. Կարապետյան, «Տնտեսության կառուցվածքային վերափոխումները որպես ներդրումային քաղաքականության գերակա մարտահրավեր», Մակրոտնտեսագիտություն, ՀՊՏՀ Բանբեր 3(39), գլխ. խմբ.՝ Կ. Աթոյան, «Տնտեսագետ» հրատ., Երևան 2015[3]: 163էջ – էջ 72-78:
6. Լ.Կարապետյան, «ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունների ու կապիտալի կուտակման որոշ հիմնահարցերի շուրջ», ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր, – Եր.,: ԵՊՀ հրատ., 2015 – էջ 175-179
7. Լ.Կարապետյան, «ՀՀ-ում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցի շուրջ», «Բանբեր» ԵՊՀ, Սոցիոլոգիա և տնտեսագիտություն, N 2(23), ԵՊՀ հրատ., Երևան 2017, էջ 69-79

КАРАПЕТЯН ЛИАНА ГРАЧЯЕВНА

ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИИ В РЕАЛЬНЫЙ СЕКТОР ЭКОНОМИКИ АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 22 июня 2018 года в 13:30 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

Резюме

Актуальность темы исследования обусловлена исключительной важностью привлечения инвестиций в реальный сектор экономики, эффективность которого определяет предпосылки повышения качества экономического роста и закладывает основы устойчивого развития экономики в долгосрочной перспективе. Проблема привлечения инвестиций в реальный сектор армянской экономики – одна из наиболее обсуждаемых с самого начала проведения реформ. И несмотря на экономический рост, наблюдающийся в экономике Армении в последние годы, вопрос «инвестиционного голода» не снят с повестки дня.

Принимая во внимание нынешний ход экономического развития страны, а также затрагивая существующие проблемы, учитывая важность макроэкономической стабильности, качественного экономического роста и развития в Армении, в данной работе были рассмотрены некоторые вопросы привлечения инвестиций в реальный сектор экономики.

Цель диссертационной работы заключается в выделении тех направлений эффективного распределения инвестиций в реальном секторе экономики, которые одновременно могут способствовать качественному экономическому росту и макроэкономическому равновесию исследуя динамику и качество экономического развития Армении.

Поставленная цель обусловила необходимость решения следующих задач:

- Изучить динамику экономического развития, качество и структуру экономического роста, выделить некоторые макроэкономические факторы, определяющие социально-экономическое развитие Армении,
- Выявить тенденции улучшения структуры инвестиций, а также некоторые вопросы инвестиционной деятельности в реальном секторе экономики,
- Осуществлять факторный анализ макроэкономических условий конвертации сбережений в инвестиции, подчеркивая решающую роль и структурные особенности доходов,

- выделить те сферы реального сектора экономики Армении, которые являются эффективными направлениями привлечения инвестиций с точки зрения обеспечения устойчивого, качественного экономического роста и макроэкономического равновесия, с использованием экономико-математических методов
- оценить инвестиционные возможности реального сектора экономики Армении, используя результаты регресионного анализа нормой накопления и компонентов совокупного спроса: потребления и экспорта,
- разработать подходы к решению выявленных проблем учитывая «генетические» особенности экономического развития страны.

На основе проведенного исследования получен ряд научных результатов, наиболее важными из которых являются следующие:

1. Прояснено несоответствие количественного и качественного развития макроэкономической политики Армении, в контексте структурного улучшения экономики выявлены факторы социально-экономического развития, способствующие качественному экономическому росту и макроэкономическому равновесию.
2. Была оценена отраслевая эластичность реального сектора экономики, раскрывая направления, чувствительные к экономическому росту и обеспечивающие интенсивный экономический рост.
3. Обоснована необходимость повышения эффективности инвестиций в реальном секторе экономики, путем прояснения направлений распределения инвестиций в экспортируемых отраслях, чувствительных к экономическому росту, обеспечивающую качественный экономический рост и макроэкономическое равновесие экономики.
4. Анализируя макроэкономические предпосылки конвертации сбережений в инвестиции, а также мотивы осуществления активных и пассивных сбережений, уточнены факторы повышения уровня доходов как источник увеличения доли накопления капитала в ВВП.

LIANA HRACHYA KARAPETYAN

PROBLEMS OF ATTRACTION OF INVESTMENTS INTO REAL SECTOR OF ECONOMY IN ARMENIA

The summary of the dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of PHD in Economics in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its spheres”

The defense of the dissertation will take place at 13:30 on the 22th june, 2018 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

ABSTRACT

The aim of the research is determined by the exceptional importance of attracting investment in the real sector of the economy, the effectiveness of which defines the prospects of the quality of economic growth and lays the foundation for stable economic development in long lasting term. Investing in the real sector of economy is one of the urgent problems of the investment process in Armenia, and the problem of attracting investments into the real sector of Armenian economy is one of the most discussed problems since the beginning of the reform. And despite the economic growth observed in Armenia's economy during recent years, the issue of "investment hunger" is not removed from the agenda.

The aim of the thesis is to identify those areas of effective distribution of investments in the real sector of the economy that can simultaneously promote high-quality economic growth and macroeconomic equilibrium by examining the dynamics and quality of the economic development of RA.

The goal requires the solution of the following tasks:

- To study the dynamics of economic development, the quality and structure of economic growth, highlight some macroeconomic factors that determine the socio-economic development of Armenia,
- To identify trends in improving the structure of investment, as well as some issues of investment activity in the real sector of the economy,
- To carry out factor analysis of macroeconomic conditions for converting savings into investments, emphasizing the crucial role and structural features of income,
- To highlight those areas of the real sector of the economy of Armenia that are effective areas for attracting investment in terms of ensuring sustainable, quality economic growth and macroeconomic balance, using economic and mathematical methods

- To assess the investment opportunities of the real sector of the economy of Armenia, using the results of regression analysis the rate of accumulation and components of aggregate demand: consumption and exports,
- To develop approaches for solving identified problems, taking into account the "genetic" features of the country's economic development.

On the basis of the study a number of scientific results have been found out, the most important of which are the following:

1. The discrepancy between the quantitative and qualitative development of the macroeconomic policy of Armenia has been clarified, in the context of structural improvement of the economy revealed factors of social and economic development, that promote qualitative economic growth and macroeconomic equilibrium.
2. The sectoral elasticity of the real sector of the economy was assessed, revealing the directions sensitive to economic growth and ensuring intensive economic growth.
3. The necessity of increasing the efficiency of investments in the real sector of the economy is substantiated, by clarifying the direction of investment distribution in exported industries sensitive to economic growth, ensuring high-quality economic growth and macroeconomic equilibrium of the economy.
4. Analyzing the macroeconomic prerequisites for converting savings into investments, as well as motives for the implementation of active and passive savings, the factors of raising the level of income as a source of increasing the share of capital accumulation in GDP have been clarified.